

այդպիսի տառերով իւրաքանչիւր սիւնակն ունի 66 տող: Այդի առաջ ունեցէ՛ք, որ պ. Դադարաշան խոստանում է տալ այսպիսի ծաւալ ունեցող 10 գիրք, եւ այնուհետեւ հաշւեցէ՛ք թէ որքան պատկառելի չափեր պիտի ունենայ ամբողջ բառարանը:

Այս չափերը, ուս ընդարձակ ծրագիրը մեզ իրաւունք են տալիս առանձին ուշադրութիւն հրաւիրել պ. Դադարաշանի գործի վրա: Մի գործ է դա, որ, անշուշտ, անագին գրական միջոցներ կը պահանջէ. մի գործ է դա, որի նմանը գոցէ երկար ժամանակ չը կրկնվի մեզանում: Ուստի եւ շատ կարեւոր է այժմից իսկ քանի դեռ ուշ չէ, ամեն միջոց ձեռք առնել, որպէս զի թէ կազմողի ջանասիրութիւնը, թէ գրական մեծ միջոցները իրանց համապատասխան արդիւնքը տան եւ բառարանը—որքան այդ հնարաւոր է—ազատ լինի խոշոր պակասութիւններից:

Ուստի այսպէս, մենք այժմ մեր առջեւ չունենք փաստեր, որոնք ապացուցանէին թէ պակասութիւններ կը լինեն: Չը գիտենք, գուցէ պ. Դադարաշանին աջողակութիւն է մի լաւ բան տալ: Բայց այսպիսի մի խոշոր գործում մենք աւելի լաւ ենք համարում լինել յոռետես, կասկածոտ, քանի որ այդպիսով միայն կարող ենք ձգտել հնարաւոր կատարելութեան: Ինքը, կազմողն էլ, երեւի, համաձայն կը լինի, որ ինքը ոչ անխալապ կան է, ոչ էլ բոլոր յարմարութիւններն ունի մի լաւ, կարելիին չափ անթերի, բառարան կազմած լինելու համար:

Կամենալով ավելցել պ. Դադարաշանին, մենք ձեռնհաս անձինքների առանձին ուշադրութիւն ենք հրաւիրում այս նոր բառարանի վրա: Թող այլ եւս անտարբեր չը մնան, թող քննեն բարեխղճութեամբ եւ անկեղծութեամբ, ցոյց տան պակասութիւնները, խորհուրդներ տան թէ ինչպէս կարելի է աւելի լաւ տանել գործը: Սա շատ կարեւոր է, այսպիսով մենք վերջի վերջոյ կունենանք մի մեծ բառարան, որին կարելի է հաւատալ, որով կարելի է առաջնորդել: Ով արեւել է ունեցել դիմելու գոյութիւն ունեցող բառարաններին, ով ճանաչում է նրանց աղքատութիւնը, անթիւ պակասութիւնները, նա շատ լաւ կարող է հասկանալ, թէ ինչ ենք մենք ուզում անել: Գիտէ՛ք ինչ է նշանակում ձեռք առնել մի բառարան, նախապէս համոզված լինելով, որ նրան հաւատալ չէ կարելի: Մենք շատ կը ցանկանանք, որ պ. Դադարաշանի բառարանը իր լրակատարութեան հետ լինէր եւ միանգամայն վստահելի առաջնորդ:

Թողնելով, որ ձեռնհաս անձինք բարձրացնեն իրանց ձայնը եւ օգնեն մի գործի, որ արժանի

է ամեն խրախուսանքի, մենք այստեղ աւելորդ չենք համարում մի քանի խօսք առել առաջին գրքի հրատարակութեան մասին: Տարաբաղդաբար, բառարանի տպագրութիւնը շատ անկատար է. թուղթը վատ չէ, բայց տպագրութիւնը շատ անխնամ է, մուրը վատ. տպարանի անհոգութեան պատճառով տառերը կիսատ են դուրս եկել: Չը պէտք է մոռանալ, որ բառարանը առանց այն էլ հեշտ կարդացելի չէ, քանի որ մանր տառերով է չարվում: Այդտեղ պէտք է շատ խնամքով, շատ պարզ ու զեղեցիկ տպագրութիւն, եթէ կամենում էք ընթերցողին էլ յարմարութիւններ տալ: Տպագրութեան հարցը ամենակարեւորներից մէկը պէտք է համարէ պ. Դադարաշանը: Այդքան աշխատանք, այդքան ծախս թափել եւ տալ մի վատ տպագրութիւն—ինչի նման է սա: Մի գիրք, որ ամեն օր, ամեն ժամ գործածութեան մէջ պէտք է լինի, ցանկալի էր, որ լաւ տպագրութիւն թողնէր եւ արտաքին կողմից:

Մեր ցոյց տուած պակասութիւնը հեշտ կարելի է դրստել: Կատարեալ աշողութիւն ենք ցանկանում պ. Դադարաշանի գործին:

Լ.

Նոր ստացված գրքեր. —1) Բժ. Վահան Արծրունի—«Թորոյտ կամ Բարակացաւ», պատկերազարդ, 48 երես, գինը 10 կօպէկ. 2) Բժ. Վահան Արծրունի—«Ինքնուրույն կամ Նոր ծաւ», 16 երես, գինը 3 կօպէկ. 3) Յարութիւն Նապոլեոն—«Երազմունք Մէր», վէպիկ, 135 երես, գինը 30 կօպէկ. 4) Ա. Գումայլով—«Հասարակական թէօրիանք», թարգ. Խ. Սարգսյան, 16 երես, գինը 5 կօպէկ. 5) Ե. Արաքլիս—«Դժբաղդ Թաթիս», հոգեբանական էտիկայ թարգմ. Աւետիք Բարսեղեանց, 6) «Հաշի Տափի թաղի Գամուկն» Ս. Գեորգի եկեղեցւոյ 1901 թ. երէցփոխ Սաւաթի Վարդապետեանի օրօք. 7) Գ. Մ. Կարապետ—«Завѣтъи о городских самоуправленіи на Кавказѣ». Тифлис, 1902, 213 стр., цѣна 60 коп., съ перекладкой—75 коп. 8) «Честъ», романъ въ двухъ частяхъ Ширванзаде, переводъ съ армянскаго Ал. Х. Тифлис, 1902, 142 стр., цѣна 50 коп.

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Թունիսի 4-ին

Երէկ, ամսիս 3-ին, քաղաքային ժողովարանի դահլիճում, թեմական դպրոցի երգեցողութեան ուսուցիչ պ. Դեմոստրանտ տունց երկրորդ կօնցերտը Այժմ, երբ այլ եւս չը կայ մեր ժողովրդական երգերի շնորհալի ղեկավար Կարա-Մուրզան եւ նրա տեղը բաց է մնում, մի առանձին կարեւորութիւն ստանում է պ. Դեմոստրանտը, որպէս հետեւող Կարա-Մուրզայի Հէնց այս տեսակետից կարեւոր է կանգ

առնել Դեմոստրանտի պակասութիւնների եւ առաւելութիւնների վրա:

Երեւանի թեմում տրված երկու կօնցերտների փորձը ցոյց տուեց, որ Դեմոստրանտը ընդունակ է քառաձայն խմբեր կազմել եւ հրապարակ հանել մեր ժողովրդական այնքան կեանքով լի, իւրօրով հարուստ երգերը, բայց նրան զեռ չափ ըմբ է պակասում այնպէս հեղինակաւոր կերպով իշխելու խմբի վրա, որպէս մուզիկայի խիստ կանօններին հետեւող խմբագետ: Գուցէ այդ նրանից է, որ Դեմոստրանտի երկտեսարդ է եւ իր ոյժերը նոր փորձող մարդ է, բայց եւ այնպէս, երկու կանօններ անհրաժեշտ է չը մոռանալ. նախ՝ կարգապահութիւնը եւ երկրորդ՝ ծրագրից չը չեղվելը: Մենք երբէք չենք կարող մոռանալ Կարա-Մուրզայի վրդովմունքը, երբ խումբը, կամ խմբի անդամներից մէկն ու մէկը խանգարում էր կարգը, սխալ երգում կամ ձայն էր հանում երգի ժամանակ: Մի փոքրիկ շշուկ, եւ անհերք փշացաւ. «Ֆալա» աղաղակում էր ձեռքերի եւ մազերի շարժումով Կարա-Մուրզան եւ ընդհատում հարգը. նա նորից չափով վրդովվում էր, երբ հրապարակութիւնը պահանջում էր պրօգրամից դուրս երգեր, կամ յաճախ պահանջում էր կրկնել երգը. այդ դէպքում նա անդիմադ էր, իսկ Դեմոստրանտի զիջող է, նոյն իսկ թոյլ: Նա, կարծէք, քաջվում է նկատողութիւններից եւ խստապահանջ չէ, այդ պատճառով էլ կարող է տէմպը. նա ոչ միայն շուտ շուտ կրկնել է տալիս, այլ եւ դուրս է գալիս ծրագրից անսահման չափով, երբեքով ամեն մի պահանջած երգ, որը ամենից շատ թուլացնում է կօնցերտի տպագրութիւնը: Կարա-Մուրզան նշանակութիւն չէր տալիս ժողովրդի անտեղի պահանջներին, նրա համար ժողովրդի ունեւին միմիայն մուզիկայի կանօնները, նա այդ կանօններից չեղնում էր բացառիկ դէպքերում եւ անհա շատ աջողութեան մարդը գաղտնիքը: Այս պակասում է Դեմոստրանտին: Չը նայած այս բոլորին, այս անդամ քառաձայն խումբը անհամեմատ լաւ էր պատրաստված առաջինից եւ երգեց մի քանի երգեր շատ աջող, մասնաւոր ընդհատում էր Դեմոստրանտի ժամանակով կունենայ կրկնակի աջողութիւն, որովհետեւ գիտէ գործել:

Գալով սօյո երգողներին, այս կասեմք, որ նրանցից երկուսը փչացրին խմբի թողած տը—պակասութիւնը. սօյո երգողների մէջ աչքի էր ընկնում Դեմոստրանտի իր դուրսկան եւ մշակված ձայնով Կարա-Մուրզան դէպի սօյո երգողները աւելի խիստ էր. որքան էլ լաւ կանօնաւոր երգող լինէր, նախ նրան լսում էր, մշակում, կոկում եւ ապա սովոր

րեցնում, ու նոր բեմ հանում, իսկ Դեմոստրանտը թողնում է երգողի կազմին, որքան ուզում է նա այնքան երկարացնում եւ ձգձգում է: Ի հարկէ, մենք չենք պահանջում, որ Դեմոստրանտը Կարա-Մուրզա դառնայ, բայց նա կարող է նրա մեթօդը վերցնելով շատ բանում: Նրան հաճանք, Հանդերձ այս բոլորի Դեմոստրանտը կենդանութիւն է առաջ բերել մեզանում, օրիորդների եւ երիտասարդների համար: Խմբում եւ ժողովրդական նոր-նոր մօտիվների քաղցր ելուէջները լսելի են շատերի բերանում:

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Թունիսի 11-ին

Գանձակի գաւառի Գետաշէն, Բանանց, Փիլի, Բարձառ, Ուշապալ, Գետաբէկ, Բարսում, Գառնակեր, Ջաղիր ու այլ գիւղերում հանդիսաւոր հոգեհանգիստներ են կատարվել Բազմաւարդապետ Թաւաքալեանի յիշատակին: Բոլոր գիւղերում էլ, ուր հանգուցեալը անձամբ ճանաչված էր, քահանաները դամբանական քարոտներ են խօսել նրա մասին ոչ միայն իբրեւ հաւաքաւոր արժանաւոր հոգեւորականի, այլ եւ իբրեւ գիւղական ժողովրդի անկեղծ համոզված սրտացաւ բարեկամի, որի նմանին մեր հոգեւորականութեան մէջ ժողովուրդը չտեսնակաւ: Կատարեալ Բոլոր գիւղերում Թաւաքալեանի մահվան լուրը առաջ է բերել անկեղծ ցաւակցութիւն, գործել է այնպիսի տպագրութիւն, որը շուտով չէ մոռացվում ու անհետանում:

Հայ գիւղացին իր գիւղի սահմաններից դուրս չափ թիչ է մարդիկ ճանաչում. նա իր համար ցաւաղ, մտածող գործիչներին շատերի մասին ոչ մի տեղեկութիւն չունի, մասնաւոր նրանից հետո գտնվող, նրա հետ անմիջապէս չը չփոխ գործիչների մասին: Թաւաքալեանին ճանաչում է հայ գիւղացին, եւ այն էլ ամենալաւ կողմից, բնական ու հասկանալի է գիւղացու ցաւը. նա զգում էր, որ կորցնել է իր հազուադէպ բարեկամներին միմիայն:

Սօս չորս տարի գտնվելով Գանձակի վիճակի առաջնորդական փոխանորդի պաշտօնում, Թաւաքալեանը անպայման հաւատարիմ մնաց իր յայտնի անցեալին ու դաւանած իդէալներին: Թէ քաղաք, թէ գիւղ նրա սրտին մօտ էին շատ, բայց գիւղն իր խղճով վիճակով, կորուստաբեր խաւարով ու նրանից ծագող անվերջ ցաւերով մի թիչ աւելի էր մօտ նրան: Չը նայած իր մշտադեմ հիւանդութեան, որը յաճախ ստիպում էր նրան օրերով ու շաբաթներով սեղանից չը հեռանալու, վերջի վերջոյ գերեզմանում արտասովոր էին դադանացած ու ապուշ կղերի տղիքներից մէկը: Եւ հնար էին փնտրում ըս մեծ գիւղւոյ աշխարհին կտակելու քան առկա ու ըս ներկեական դատի հետ, մը տածում էին արդեօք, որ երեք դար յետոյ բնաւ աղքատիկ անակը կը դառնայ ուխտաւորի անգամ հետաւոր արեւելքից հասնող մի ճանապարհորդի համար, կարող էին յուսալ, որ փոքրիկ մանուկն անգամ ըս հայրենի քաղաքում ըս անունով կը պարծենայ, մինչդեռ ըս անասնացած դահիճները մոռացութեան եւ յաւիտենական անարգանքի կը դատապարտվեն:

Պատմութիւնը դարերի միջին թաւալում է ոճիւրներով ու արեւնով ծանրաբեւեռված: Միքէլ անթի կոխկառնված ու ջարդված, մեթոյ յաղթական ու փրկարար, յամառ կերպով իր ճանապարհն է հարթում, բոլոր այդ դիմաւորութիւնները, բոլոր այդ արեւելքի, բոլոր այդ ոճիւրների բարձր: Ապագայ սերունդները դառնութեամբ ողբում են հայրերի սխալները եւ նախախնայքով կընդուն յիշատակը խղճի եւ մաքր պատմութեան թշնամիներին, բայց մի արտասովոր անհետեւողականութեամբ տարբեր ձեւերով եւ տարբեր միջոցներով շատ անգամ չեն քաշվում: Նման ոճիւրներ, նման բռնութիւններ գործելուց: Աշխարհում այժմ հազիւ գտնվի մի երկիր, ուր Գալիլէյի անունը պատկանանքով չը յիշվի, բայց ով կարող է ասել, թէ միտքը եւ խիղճը, որոնց նահատակն է այդ մեծ մարդը, ազատ են այդ մի եւ նոյն երկրիներում: Միփոխել եւ յուսաւորում այն է միայն, որ գիտութիւն, մաքր եւ ազատութեան գործը թէեւ դանդաղ է, բայց աներկալ եւ ժայռի հիմք կընող աղիքների նման լուսաւոր բանականութիւնը խաւարի դարաւոր շէնքն է քանդում: Թամ առ ժամ: Ով կարող է երկբայել, որ այդ դարաւոր պայքարի մէջ յաղթանակը ազատ մտքին է Գալիլէյիներին է, յաղթանակը ազատ մտքին է պատկանում:

Ա. Անարտեսան

իր պղտոր ջրերը գալարելով հոսում է կանաչ մարգագետիններից եւ դնում է թափվում ծովի մէջ լայն բացուածքով, միւս կողմում՝ Լիւվորնոսի մօտ, Մօնդիներս լեռների մի շարքն է ձգվում մերթ անտառներով պատած, եւ մերթ լեռի կողքեր ինչպէս անագին խոցեր արեւին դէմ արած: Արեւմուտքում ծովն է փայլվում արեւի շողերի տակ եւ գուրգուրում է իր ծոցում: Գորգոսա կղզին: Պիզայի չորս կողմում երեւում է ընդարձակ եւ հարթ մարգագետինը աղօթված բազմաթիւ սպիտակ ճանապարհներով, որոնք կանաչի այդ միապաղաղ ծովի մէջ երեւում են ինչպէս գալարուն, փայլուն օձեր:

Թեք աշտարակի դէմ ու դէմը մի եւ նոյն կանաչ հրապարակի վրա կանգնած է մի այլ գեղեցիկ շէնք՝ Պիզայի անագին կաթնաղբալը: Մարդիկայի սարակինոսների վրա տարած յաղթութիւնից յետոյ 1083 թ.ին, Պիզայի հանրապետութիւնը հիմնարկեց այս եկեղեցին ի պատիւ ս. Կուսմին, որ տուել էր նրանց այդ մեծ աջողութիւնը:

Սրբ մի փոքրիկ հանրապետութիւն, որպիսին Պիզային էր, կառուցանում է մի այսպիսի հսկայական մեծածախս շէնք, սակայն, որ վաճառականութեամբ կամ պատերազմներով օտար երկրներից մեծ հարստութիւն, աւար է ձեռք բերել եւ չը գիտէր ինչպէս վստահել այն իր փառքի գիտութեան մէջ. Կալիզաքի, ասում է Վիտորի, իրանց մեծութեան եւ առաջադիմութեան գաղաթնակէտին հասած, տէր Մարդիկայի, Կորսիկայի եւ Ելբա կղզու, իրանց քաղաքը լի էր բազմաթիւ մեծ եւ հզօր քաղաքացիներով եւ ամենահեռաւոր երկրներից բերում էին անչափ պատերազմական աւար, կողոպուտ *):

Միջին դարերում իտալական բոլոր փոքրիկ հանրապետութիւնները ինչպէս մրցակից էին վաճառականութեան եւ աշխարհակալութեան մէջ, նմանապէս աշխատում էին իրարից յետ չը մնալ մեծածախս եւ գեղարուեստական վիթ-

խարի շինութիւններով: Վենետիկն իր պալատն ու աշտարակն ունի, Սյօրենցիան իրանը, ինչպէս Պիզան էլ չէր կարող ունենալ իրանը:

Իտալական շատ եկեղեցիներ եւ շատ պալատներ եւ այգիներ, համարեալ եւ ոչ մէկն այսպիսի ֆասադ ունի: Իրար վրա չարված հինգ յարկ մարմարէ սիւները իրանց փոքրիկ կամարներով եւ սրահակներով, կախված հսկայ շէնքի ճակատից, ծածկում, զարդարում են նրան մի անօրինակ ճաշակով: Օղի մէջ կախված այդ բազմաթիւ սիւներն ու կամարները վերջապէս շողերի տակ փայլուն ձեւերով թեմում նմանում են մի կախված, գիւթական անտառի: Թէ արտաքուստ եւ թէ ներքուստ, ինչպէս սրամիտ կերպով նկատել է Տէնը, այս եկեղեցին հեթանոսական մի բան ունի, որ միջնադարեան միտաբաններ խեղդող խաւարից չը գիտեն ինչպէս, խուսափել է եւ ցցվել է այստեղ իր բոլոր վեհութեամբ: Դասական առողջ եւ ժպտուն փիլիսոփայութիւնն է այս, կարծես, որ սիրտն ու միտքը հիւժող, չորացնող միջնադարեան արթնների մէջ յանկարծ հնչվել է իր բոլոր ուժով եւ հմայքով: Այս կամարներն ու սիւները հեթանոսական տաճարի, Ապոլոնի կամ Պալլաս—Աթենասի բնաւ կարանի մնացորդներ լինեն կարծես եւ այդ հաւածված աստուածների արձանները նրանց ներքոյ միանգամայն իրանց տեղում կը լինէին: Եկեղեցին ներսից պակաս օրիգինալ չէ. չորս կարգ մարմարէ կորինթեան սիւների եւ պատերի սպիտակութեան վրա հազարած են սեւ մարմարէ քառակուսիներ եւ այսպիսով ամբողջըն ստացել է խառնամանուկ պատկեր:

Սեղաններից մէկի առաջ լուս կարող է մի քահանայ, նրա ետեւում փոքրիկ, հազիւ 9—10 տարեկան երեխայ, կոպցած մի անագին զրքի ծանրութեան տակ, որ կրում է ուսին, երբեմն երբեմն սուր ձայնով սպասաւորի պարտքն է կատարում: Այցելուները գրաւում են նրան, անհականալի աղօթքներից երեւի ձանձրանում է, անդադար չորս կողմն է նայում ան-

գիր նախադասութիւնները կրկնելիս, չարժվում է կանգնած տեղում եւ իր մեծ ոտնամաններով աղմկում եկեղեցու խաղաղութիւնը:

Մայր եկեղեցուն բոլորովին օտարի կանգնած է միտաբանը (baptistère), որ ոչ այլ ինչ է իր ձեւով, եթէ ոչ հռոմէական եկեղեցու մի հսկայական գմբէթ, փոխանակ որ եւ է շէնքի վրա բարձրանալու, ուղղակի գետնի վրա ցրված, ինչպէս մի արուեստական, խաչապատկ բուրս: Ներսում ոչինչ չը կայ բացի Նիկոլոս պիզացու մարմարէ քանդակազարդ մի ամբողջ նից, մի շատ սիրուն գեղարուեստական գործ: Առաջնորդ պահպանող, որ մեղ բաց է անում դուռը, կարծես կամենալով ցոյց տալ, թէ այս շէնքն այնքան էլ անհետաքրքիր չէ որքան թըւում է, երկու ձեռքը դնում է բերանի երկու կողմերում եւ մի բարակ, զիւ ձայն է արձակում, որ գմբէթի վերին խոռոչներում կրկնվում է տառնեակ արձագանքներով մօտ 5—6 վայրկեան:

Այցելութիւնս վերջապահ էի համարում, երբ Արնօ գետի ափին մի փոքրիկ երեսայ մեկնեց ինձ պօստային պատկերազարդ կարտեր:

Գալիլէյի տունը, պարոն, չէք կամենայ դընել: Կարող գնեցի եւ անմիջապէս գնալիս փնտրելու գիտութեան, ազատ մտքի, ազատ խօսքի նահապետի տունը: Քաղաքի կենտրոնից բոլորովին հեռու, մի կորած փողոցի յետ ընկած անկիւնում գտայ երկարակնի մի փոքրիկ շինութիւն երկու լուսամուտներով, եւ դրան ճակատին փորագրված մարմարի վրա կարդացի՝ Ալլատեղ ծնվող Գալիլէյ 1564 թ.ին, փետրվարի 15-ին: Կանգնած նայում եմ մտախոհ, նոյն ժամանակ լուսամուտներից մէկը բացվեց, մի թթված, քնաթթվաղ դէմքով մարդ յայտնվեց, որ տեսնելով օտարականին, կարծես մերթմըրթալով փակեց փեղկերը եւ հետագաւ, երեւի վաղուց հետ է ձանձրացած այցելուների օտար դէմքերից, օտար հայեացքների:

Խեղճ Գալիլէյ: Երբ քարացած զօգմայի երկաթէ կապանքների տակ խոնաւ բաններ խա-

*) Taine: Voyage en Italie.

ման տարաւ նրան, թաւաքաղանքը իր փոխա-
նորդութեան ընթացքում իր լայնածաւալ վի-
ճակի բոլոր գիւղերն էլ այցելեց մի քանի
անգամ եւ նրանց միմեկին, խախտուած ու
անգամ եւ նրանց միմեկին, խախտուած ու
բարոյապէս կազդուրեց իր օրոտարու զա-
րոգներով Բացի սովորական հովուական այցե-
րութիւններէն նա չէր զլանում զնալ գիւղերը
լուծիւններէն ու չէր զլանում զնալ գիւղերը
որ եւ է արտաքոյ կարգի դէպքում առանձին
եղած ժամանակ, ուշ չը գարձնելով
անյարմարութիւններն ու քաջայլած
առողջութեան լուրջ պահանջներն: Լսում է
նա, որ Ձու գիւղում խորտուածներ կան, որ
ժողովուրդը յուսահատուած մտադիր է դիմել
ճայրայեղ միջոցներ իր անտանելի դրութիւնից
մի ելք գտնելու համար: Ճանաչող ցուրտն ու
արհամարհելով ձի է նստում ու շուտա-
փոյ ճանաչում Ձ. գիւղը, ուր նրան հեշտու-
թեամբ աջողութեւն է հանգստացնել զրգուլած
կրքերը, պարզել պղտորված մտքերն ու գիւղի
խանութները կենդանի կրկին իր սովորական
թացքի մէջ դնել: Լսում է, որ մի ուրիշ գիւ-
ղում մի քանի բանասերներ մարդիկ, իրանց
զոհանական շահերից դռնված, մոլորեցնում են
իրանց հասարակութիւնը, խաբուում են նրան:
Նա իսկոյն գնում է այնտեղ ու իրազեկ խօս-
քով, անհրաժեշտ, համոզեցութեամբ արգելադրու-
թեամբ թաւաքաղանքը կարողանում էր ժողո-
վրդի վրա ազդել: Նա նրա աչքում ունէր հե-
ղինականութիւն, բարոյական մեծ պրեմիւմ,
զգայն ըստ գիւղացիներէն Ինքնագործ, գոե-
հիկ ու իրանց մեծ չը ճանաչող գիւղական
զեկավարը, գիւղին տոն տուող իշխանը լսում
էր թաւաքաղանքի առաջ, առանց խօսք ծպտա-
լու տանում էր նրա իր հասցէին ուղղած ար-
դարացի դայրոյթն ու ցատուժը, բնազդամբ
զգալով, որ գործ ունի մի անընկճելի բարոյա-
կան ոյժի հետ, որին բնորոշողը չէ կարելի:
Բ.—գիւղում մի տեղական զուլալ արտաք-
ուս է իր կնոջն ու ապրելի կենսակցութիւն
միտում մի ուրիշի հետ: Անպատեհ լինելով գի-
ւղում է յաջորդի պաշտպանութեան: Գիւղի
ամբողջ հասարակութեան ներկայութեամբ թա-
ւաքաղանքը սաստիկ տնարգում է գիւղացուն,
եւ նա, որի հետ նոյն իսկ մարմնաւոր իշխա-
նութիւնը ոչինչ չէ կարողանում անել յաճախ,
նկատել ներդրութիւն է խնդրում վարչակա-
նայն ու յետ ընդունում իր կնոջը: Բ.—գ գիւ-
ղում մի աղջկայ նրա կամքի հակառակ նշա-
նում են մի հիւանդ ու վերքերով ծածկված
աղայի հետ: Աղջիկը չէ ուզում գնալ: Նրան
ստիպում են բռնի ոյժով: Բանն այնտեղ է
հասնում, որ խեղճ փորձում է անձնապա-
նութիւն գործել նոյն իսկ Նրա ազգականնե-
րից մինը գիւղում է թաւաքաղանքի օգնու-
թեան, որը միջամտելով գործին, իր մօտ կան-
չելով աղջկայ ծնողներին, գիւղի քահանաներին
ու տանուէրներին, ազատում է խեղճ աղջկան
կորստից ու տալիս նրան իր հովանաւոր աղ-
ջկական խնամելու:

Այդպիսի փաստեր կարելի է շատ ու շատ
բերել Ժողովուրդը գիտէր, որ քաղաքում մի
լաւ հայր սուրբ կայ իսկական հայր սուրբ,
որի դուռն ու սիրտը միշտ բաց են բոլոր նը-
րան զինորդներ համար, որը պատրաստ է ա-
մեն մի խնդրել լսել կարեկցութեամբ ու որին
կարելի է ամեն ցաւ ու վիշտ յայտնել, ու
ճայրայեղ դէպքում ստանալ նրանից նոյն իսկ
նիւթական օգնութիւն: Թաւաքաղանքի աղքա-
տիկ զրգանք էր բաց բոլոր կարօտեանների
համար, ու հէջն իր այդ առատածնութեան
ու զարմանալի անշահախորութեան պատճառով
նա կրում էր նիւթական մեծ գրկանքներ, հը-
նարաւորութիւն չունէր հիմնաւորապէս բը-
ժակելու, զնալ հանգչին ջրեր, ինչպէս խոր-
հուր էին տալիս բժիշկները, ու մի կեանքն
առնաաւարակ առողջապահական տեսակէտից
զննելի իսկական լաւ պայմանների մէջ:
Թաւաքաղանքը իրեն գիւղական քարոզիչ
գարնով անմահ էր: Նա գիւղացիների հետ
խօսում էր ամենապարզ լեզուով ու ամենամօտ
առողջութեան, նա խօսում էր գիւղացու ա-
ռողջ աշխատանքից, նրա գործիքի, վարից,
ցանքից, կալ ու կուտից, գիւղացու տգիտու-
թիւնից ու կենցաղավարութիւնից, նրա կեան-
քի անբաղաւաղութիւն, հակակուլտուրական պայ-
մաններից, գիւղական կառավարութիւնից, բն-
տանական կեանքից ու կնոջ վիճակից: Ամենա-
լուսաւոր ու ժողովրդիկ հասակնայի հա-
յրներն էր անցկացնում նա իր քարոզների
մէջ: Գաղափարներ էր գիւղացու գոհկու-
թիւնը ու նրանից առաջ եկած արատները:
Գաղափարներ էր հասկանալի ոճով եւ օրգական
բաղադրակութիւնը, կուլտուրան ու հրաւի-
րում էր օրինակ վերցնել իր զրացի եւրօպա-

ցատեանում գործիւթիւններ եկեղեցիներից Թիֆ-
լիսի գաւառի սահմաններում, եւ զա մի կազ-
մակերպված աւագակամբի գործ է, Թիֆլիսի
պօլիտեխնիկայէր կարգադրեց՝ առաջարկել եկե-
ղեցիների աւագ քահանաներին՝ պահապանե-
րի գիւղերային հերթապահութիւն հաստատել
եկեղեցիները պաշտպանելու համար:

Մեզ հաղորդում են, որ առաջիկայ ձմեռվայ
սեզոնում Թիֆլիսի արքունական թատրոնը չի
ունենայ սեփական օպերային խումբ եւ որ
թատրոնը դուրս գալու պայմանով տրվի իշխան
Ծերեթեթեթի, որը յայտնի է իբրեւ հմուտ անտ-
րադերնէօր եւ վերջին 6—7 տարվայ ընթաց-
քում պահում էր օպերային խմբեր իտալի-
ական եւ դարնան իր խմբով տալիս էր ներկա-
նակներ Պետերբուրգում: Բանակցութիւն-
ները դեռ չեն վերջացել: Ծերեթեթեթ յոյս ունի
աշխույթները գլուխ բերել գործը:

«Kacm» լրագրում կարգում են: «Եթէ հա-
ւատանք Մէկկայից վերադարձած ուխտաւոր-
ներին, գոն նրանց երկու երրորդ մասը մե-
ռել են ճանապարհին: զխաւորապէս օտարներ,
այն հակառակորդապահական պայմանների պատ-
ճառով, որոնց մէջ գտնվում են նրանք ճանա-
պարհորդութեան ժամանակ: Մի քանի խմբեր,
աւսում են, որոնք գնացել էին 200—300 հո-
գուց բաղկացած, որ արագորձ են 20—30 մար-
դով Սալանցի 28 ուխտաւորներից վերադար-
ձել են միայն 13 հոգի, մնացածները մեռել են:
Եւ այդ պատահում է, այսպէս ասած, խաղաղ
ժամանակ, երբ Մէկկայում չը կան տարափո-
խիկ հիւանդութիւններ, ուրեմն ուխտաւորնե-
րի ինչ առկուս է վերադառնում հայրենիք խօ-
լերայի, ժամապատի է եւ ուրիշ հիւանդութիւն-
ների ժամանակը:

Յունիսի 10-ին իտալիական եւ Բարիլոսկի
խմբիւնները ներկայացրին քաղաքային վար-
չութեանը իրանց պայմանների նախագիծը՝ Սօ-
լոյակի տօնէլը կառուցանելու համար, որով
գիւրացիները է քաղաքի կենտրոնի հաղորդակ-
ցութիւնը Բոտանիկական այգու եւ քաղանիք-
ների հետ: Այդ պայմաններից զխաւորները
հետեւեալներն են, 1) տօնէլը, կամուրջը եւ
ճանապարհները չինում են ձեռնարկողները, ո-
րոնց իրաւունք է տրվում 40 տարվայ ընթաց-
քում, տօնէլը բացվելու օրից, տօնէլով եւ
կամուրջով անցնողներից վերցնել 2 կ. ոտով
գնացողներից, եւ 5 կ. կառքերից, 2) 40 տա-
րուց յետոյ տօնէլը եւ կամուրջը քաղաքի սե-
փականութիւն են դառնում, 3) քաղաքը իրա-
ւունք ունի ամեն ժամանակ յետ գնել տօնէլը:

Երկրայ տարում Ալեքսանդրեան ուսուցչա-
կան ինստիտուտում անարտեցիկ իրանց ուս-
ման ընթացքը 3 հայ—Գոռեան Գրիգոր, Սու-
բիանեան Վարդան եւ իտալիական Բարսեղ, ո-
րոնցից յետոյ ինստիտուտում չը մնաց եւ թե-
րեւս չը լինի ապագայում ոչ մի հայ աշակերտ:

Թիֆլիսի առաջին իրական գիմնազիայում
վերջացան ճանութիւնները յունիսի 8-ին: Լրա-
ցուցիչ IX դասարանը աւարտեցին 81 աշակեր-
տէիւններ, որոնցից 69 անային ուսուցչուհի
իրաւունքով եւ 12 անային դաստիարակչուհի
աւարտեցին 74 աշակերտուհիներ, որոնց մէջ
եւ հետեւեալ հայուհիները՝ Ն. Բեռլեթով
(ոսկի մեդալով), Մանուկբեան Կ., Մէլիք-
Բեկարեան Ա., Մէլիք-Շահնազարեան Ս. (ոսկի
մեդալով), Սարգսեան Ա., Սպանդարեան Ե., Տէր-
Արքանաւան, Արաւիկբեան Ե., Աստուածա-
տրեան Կ., Գալուստեան Բ., Դամբարեան Վ.,
Մամուլեան Ն., Մէլիք-Ազարեան Ս., Նարե-
նեան Զ., Փարուխեան Կ., Տէր-Միքայելեան Ե.
(ոսկի մեդալով), Տէր-Միքայելեան Վ., Տիգրա-
նեան Ե., Շահաղիզեան-Կամարական Մ.:

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՆԱՆԻՑ մեզ գրում են. «Երի-
տաւարդ վաճառական Զ. Պալեան պատուիրեց
քանդակագործ Անդրէաս Տէր-Մարութեանին
պատրաստել Հ. Ղ. Ալիշանի կիսարձանը (փոքր):
Միքայել Նալբանդեանի կիսարձանի կազմապար-
կ. Տէր-Մարութեանը վերջացրեց 1856 թ. պատ-
կերից: Աշխատանքը նման է եւ աշող ու շատ
լաւ տպավորութիւն է թողնում»:

ԴԵՐԲԵՆԴԻՑ մեզ գրում են. «Դերասան
Վրոյը իր խմբով առաջին անգամ այցելելով
մեր քաղաքը, յունիսի 6-ին ակումբի բնակ վրա
ներկայացրեց «Վերջին հիւրը», «Արամ եւ Եւա»
եւ «Ծերուկը հանաք է նստում» պիեսները: Իր
ստանձնած դերերում պ. Վրոյը աննման էր

եւ արժանացաւ հասարակութեան կողմից բուռն
ծափահարութեան, իսկ միւս դերակատարների
մասին կարելի է ասել, որ բաւարար էին Շատ
ցանկալի էր, որ պ. Վրոյը վերադարձին հա-
մաձայն իմալ մեր քաղաքում գոնէ մի ներ-
կայացման համար, որով հոգեպէս բաւականու-
թիւն տուած կը լինէր մեր թմրած հասարա-
կութեան»:

ՂԱՐԱՍՈՒԲԱԶԱՐԻՑ մեզ գրում են. «Լուր
կայ թէ տեղիս ծերունի հայր Սարգեան քա-
հանայի տեղ, որը ծերունակն պատճառով այլ
եւս անկարող է շարունակել իր պաշտօնավա-
րութիւնը, տեղիս հայ հասարակութիւնը մտա-
դիր է հրաւիրել իտալիացի Սրապիոն քահանայ
Սամուէլեանին: Սամուէլեան քահանան գոնէ
Դրմում առնաստարակ լաւ անուն ունի, որպէս
ինտելիգենտ անձնաւորութիւն: Մենք ուրախ
ենք, որ վերջապէս կունենանք մի կրթված քա-
հանայ եւ յուսով ենք, որ տեղիս հասարակու-
թեան գլուխ կանգնող անձինք չեն յապաղի
սպանդակահարել միջոցներից զուրկ հայր Սա-
րգեանին եւ հրաւիրել Սամուէլեան քահանային»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Հաւաստի գործակալութիւնը հաղորդում
է, որ երբ բօքսերը՝ Անդրային հաւատարմու-
թեան երդում տուող յետոյ, մտան կենտրո-
նացրած բանակը Վերսալում, ուր գտնվում
էին բօքսերի կանաչը եւ երկխոսները, ուրա-
խութեան եւ վշտի ցնցող տեսարաններ տեղի
ունեցան այնտեղ: Բանակում ապրողներից մի
քանիսը տեսան իրանց սիրելիներին երկար ան-
ջատումից յետոյ, իսկ շատերն էլ իմացան, որ
իրանց ամուսնիները, հայրերը եւ եղբայրները,
որոնց հետ նրանք յոյս ունէին տեսնվել, ըս-
պանվել են պատերազմի մէջ: Գնեալով Դէվէտ,
կանգնելով սեղանի վրա, դիմեց կանանց ճա-
նող, շնորհակալութիւն յայտնելով նրանց քաջ-
արի օգնութեան համար, որ նրանց ցոյց տուե-
ցին ազգային գործին պատերազմի ժամանակ:
«Մենք վաղուց, —ասեց Դէվէտ,—ստիպված կը
լինէինք հրաժարվել կուրի, եթէ դուք այդպի-
սի անձնագործութիւն չը ցոյց տայիք հայրենի-
քին: Բարոյական այն օգնութիւնը, որ ցոյց
էիք տալիս մեզ, սաստկացնում էր մեր եռան-
քը, կուրի մեր վճռականութիւնը: Մենք դի-
տէինք, որ եթէ մինչեւ անգամ մենք բոլորս էլ
կոտորվէինք, դուք ձեր պարտքը կը համարէիք
դաստիարակել ձեր երեսներին նոյնպիսի ան-
վեհեր, որպէս եւ նրանց հայրերն էին, որոնց
ես այժմ բերեցի ձեզ մօտ: Այժմ մենք նոր
կառավարութիւն ունենք—անգլիական: Մենք
կուրի էինք, քանի որ յոյս կար, բայց վերջ ի
վերջոյ դիմաթափ եղանք դառն անհրաժեշտու-
թեան ճնշման տակ: Հրաւիրում եմ ձեզ հաւա-
տարիմ լինել նոր կառավարութեանը: Ի հարկէ,
ձեզ համար ծանր է իմանալ իմ շրթունքներից,
որ մենք նոր կառավարութիւն ունենք, բայց
այդպէս որոշեց ինքն Աստուած: Երկու տարի
եւ ութ ամիս տեղի կուրի յետոյ, մենք ըս-
տիպված էինք հրաժարվել անկախութիւնից:
Այժմ Աստուած հրամայում է մեզ, որպէս բա-
րի քրիստոնեաներին, հաւատարիմ լինել նոր
կառավարութեանը: Ամբողջ քրիստոնեային շնորհակա-
լութիւն եմ յայտնում ձեզ, բոլորի, ձեր հաւա-
տարութեան համար հայրենիքին, ձեր հաւա-
տի համար մեր գործին: Հաղթանակեց ուրեմն
այն բանին, ինչ որ վճռել է Աստուած: Ողորդ-
րում եմ ձեզ հաւատարմութեամբ ծառայել նոր
կառավարութեանը, հետեւելով բուրգեղանքի եւ
իմ օրինակին»:

«Temps» լրագրին հաղորդում են Հոռոմից,
հեղինակաւոր արդիւրից հետեւեալը. «Վատի-
կանի Պրօպագանդային ճշգրտապէս յայտնի է, որ
Գերմանիան վերջերս յաճախ գիմում էր երկ-
րորդական պետութիւնների կառավարութիւն-
ներին, որոնք կրօնական միասնաբեր ունեն Ա-
րեւելքում, առաջարկելով իր անվանաւորու-
թեան տակ ընդունել այդ միասնաբերը: Այդ-
պիսի առաջարկութիւններ արդէն արված են
Հոլանդիային, Բելգիային եւ մինչեւ անգամ
Սպանիային, սակայն, ըստ երեւոյթանքի, այդ
պետութիւններից ոչ մէկը տրամադիր չէ ըն-
դունել այդ առաջարկութիւնը: «Temps» լրա-
գիրը տեսնում է ըստ մէջ գերմանական քա-
ղաքականութեան գործը մի նմուշ, որը սիս-
տեմատիկական կերպով աշխատում է զրկել
Ֆրանսիան նրա վաղուցայն իրաւունքներից
կրօնական միասնաբերի վրա Արեւելքում»:

ՄԵՐԱՎԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՄԱՏ ԳՈՐԾԱԿԱՎՈՒԹԻՒՆԻՑ

10 յունիսի

ՎԱՐՇԱՎԱ. «Варшавский Дневник» լրագրի
խօսքով, հաստատութեան համար առաջարկված
է տուրքերիւղի դէմ կուրելու Վարշավեան
դաշնակցութեան նախագիծը:

ՍԵՆԱՍՏՈՂՈՒ Այսօր ճանապարհ ընկաւ Պե-
տերբուրգ Մեծ Իշխանուհի Կսենիա Ալեքսանդր-
ովնա Օգոստոսիան Երեւանի հետ:

